

ՎԱՐՉԱՊԵՏՆ ՈՒ ՌԴ-Ն



Մտկվան Երեանի հետ հարաբերություններում ակնկալում է տեղեկություն ստանալ այն մասին, թե ինչ նկատի ունենում է Վաշինգտոնի վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ խոսելով «անվտանգության ոլորտում հարաբերությունների դիվերսիֆիկացման անհրաժեշտության մասին»:

«Այս դեպքում մենք հակված չենք The Wall Street Journal-ն ընդունել որպես սկզբնաղբյուր, ուստի պետք է դեռ հասկանալ, թե ինչի մասին է խոսել պարոն Փաշինյանը: Եվ, իհարկե, մենք մեր հայ բարեկամների հետ խոսակցությունում ակնկալում ենք ստանալ ամբողջ տեղեկատվությունն այս հաշվով: Եվ, իհարկե, Ռուսաստանին եւ Չինաստանին հարիր չէ շփվել թերթերի, մասնավորապես՝ Wall Street Journal-ի միջոցով, ուստի մենք շարունակում ենք խոսակցությունը, երկխոսությունը մեր հայ բարեկամների հետ եւ կշարունակենք անել դա. մենք շատ լայն օրակարգ ունենք»,- նշել է Պեկովը:

Կրեմլի ներկայացուցիչը նաեւ ընդգծել է, որ ռուսական կողմը շարունակում է ջանքերը, «փորձերը՝ օգնելու Բաքվին եւ Երեւանին այնուամենայնիվ հասնել խաղաղության պայմանագրի կնքմանը»:

«Դա անհրաժեշտ է տարածաշրջանում իրավիճակի կայունացման եւ ավելի դրական կենսամակարդակի դուրս գալու համար», - ավելի է նախագահի մամուլի քարտուղարը:

Ավելի վաղ The Wall Street Journal թերթի հարցազրույցում Փաշինյանն ասել էր, որ Ադրբեյջանի ագրեսիվ գործողությունները եւ ՌԴ-ի անգործությունն «ըստ էության, հանգեցրին մեզ այն որոշմանը, որ մեզ անհրաժեշտ է դիվերսիֆիկացնել մեր հարաբերություններն անվտանգության ոլորտում»: Փաշինյանը թերթի հարցազրույցում նաեւ նշել էր, որ Երեւանը հարցականի տակ չի դնում ռուսական ռազմակայանի դուրսբերման հարցը Չինաստանից եւ փորձում է «հասկանալ, թե որն է ՌԴ-ի եւ ՌԴ-ի նման պահվածքի պատճառը աշխատանքային հանդիպումների եւ այլ ձեռնարկների շրջանակում»: Չինաստանի վարչապետը ավելացրել էր, որ հանրապետությունը մտնում է ՌԴ-ում, «որովհետեւ այժմ կողմերը գտնվում են դիրքորոշումների ընկալման հարցերի քննարկման փուլում», չեն ցանկանում «սխալվել միմյանց հասկանալու հարցում»:

ԵԼՈՒՅԹ


ԽՆՊԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՎՈՒՅՄԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը երոյք է ունեցել Թբիլիսիում անցկացվող «Մետաքսի ճանապարհ» միջազգային համաժողովի ընթացքում, որում անդրադարձել է Հայաստանի կառավարության կողմից առաջարկված «Խաղաղության խաչմերուկ» նախագծին, Հայաստանի եւ Ադրբեյջանի միջեւ հարաբերությունների կարգավորման բանակցային գործընթացին, երկու երկրների միջեւ խաղաղության դաշմանակարգի ստորագրման հեռանկարներին:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Փաշինյանը նշել է, որ Չարավային Կովկասն ունի խաղաղության կարիք:

«Իսկ ի՞նչ է խաղաղությունը: Դա մի վիճակ է, երբ երկրներն ապրում են բաց սահմաններով, տնտեսական, քաղաքական, մշակութային, մարդկային ակտիվ կապերով կապված, բոլոր հարցերը դիվանագիտական եղանակով եւ երկխոսությամբ լուծելու փորձ եւ ավանդույթ կուտակված: Սա է իրական խաղաղությունը, եւ ինչպես տեսնում եք, այդ ամենը, այսինքն՝ բաց սահմանները, տնտեսական, քաղաքական, մշակութային կապերը, հնարավոր չեն, առանց ճանապարհների: Այս է պատճառը, որ մեր կառավարությունը մշակել է ներկայացնում է «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը՝ որպես խաղաղության օրակարգի կարելու մի մաս: Այդ նախագծի առանցքային իմաստը Չինաստանի, Թուրքիայի, Ադրբեյջանի, Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ կոմունիկացիաների զարգացումն է, ճանապարհների, երկաթուղիների, խողովակաշարեր, մալուխներ, էլեկտրահաղորդման գծեր նորոգելու, կառուցելու, գործարկելու միջոցով:

Չինաստանի հարավում եւ հյուսիսում անցնող երկաթուղիներն արդեն երեսուներեւ տարի չեն գործում տարածաշրջանային առումով, չեն գործում նաեւ արեւելքը արեւմուտքին կապող բազմաթիվ ավտոճանապարհներ, մինչդեռ այդ ճանապարհների վերագործարկումը Կասպից ծովը Միջերկրականին կապող կարճ եւ արդյունավետ ուղի կդառնար՝ թե՛ երկաթուղային, թե՛ ավտոմոբիլային:



Նույնպես եւ այդ երկաթուղային եւ ավտոմոբիլային կոմունիկացիաները կարող են Շոնգ Եւ ծովի, այդ թվում՝ վրացական նավահանգիստներին կապող արդյունավետ ճանապարհ դառնալ: Այս ծրագիրը հսկայական օգուտներ կբերի մեր տարածաշրջանի բոլոր երկրներին, եւ ես ցանկանում եմ կառավարությունների, մասնավոր ներդրողների ուշադրությունը հրավիրել այս հնարավորության վրա», - ասել է ՀՀ վարչապետը:

Նա նաեւ նշել է, որ Չինաստանը հիմա աշխատում է Ադրբեյջանի հետ խաղաղության եւ հարաբերությունների կարգավորման պայմանագրի նախագծի

վրա՝ հույս հայտնելով, որ այս գործընթացը հաջողությամբ կավարտվի մոտակա ամիսներին:

«Ինչպես ասացի, մենք հույս ունենք Ադրբեյջանի հետ առաջիկա ամիսներին ստորագրել խաղաղության եւ հարաբերությունների հաստատման պայմանագիր: Հույս ունեմ՝ առաջիկայում նաեւ զարգացումներ կլինեն Չինաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանը երրորդ երկրների քաղաքացիների եւ դիվանագիտական անձնագիր կրողների համար բացման ուղղությամբ, որը նույնպես դրական ազդակ կբերի ամբողջ տարածաշրջանին», - եզրափակել է ՀՀ վարչապետը:

ՕՐԿԱՆՃԱՆԿԱՐ

ԶՈՐԱԿՈՉԻ ՄԱՄԻՆ ՈՐՈՇՈՒՄ

Կառավարությունը հոկտեմբերի 26-ի նիստում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության՝ 2023-ի ձմեռային զորակոչ հայտարարելու եւ զորացրում կատարելու մասին որոշում կայացրեց:

Որոշման մեջ նշվում է. «Չայտարարել հոկտեմբերի 27-ից մինչեւ 2024-ի հունվարի 31-ը ներառյալ ՀՀ արական սեռի այն քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական եւ այլընտրանքային ծառայությունների ձմեռային զորակոչը, որոնց 18 տարին լրանում է մինչեւ 2023-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես նաեւ այն քաղաքացիների, որոնց նախկինում տրված տարկետումը դադարում է մինչեւ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Մինչեւ 2024 թվականի հունվարի 31-ը ներառյալ զորացրել օրենքով սահմանված ժամկետում շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքա-

յին զինվորական ծառայություն անցած զինծառայողներին:

Այլընտրանքային աշխատանքային ծառայությունից արձակել սահմանված ժամկետում այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցած ծառայողներին:

Նախագծով նախատեսվում է զորակոչի շրջանակներում ՋՈՒ համալրման ժամկետը սահմանել 2024թ. հունվարի 8-ից մինչեւ հունվարի 31-ը, իսկ պարտադիր զինվորական ծառայություն անցած զինծառայողների զորացրումն իրականացնել 2023թ. դեկտեմբերի 20-ից մինչեւ 2024թ. հունվարի 31-ը ներառյալ, քանի որ 2021թ. ձմեռային զորակոչի ժամանակ ՋՈՒ համալրումն (զորակոչը) իրականացվել է 2021թ. դեկտեմբերի 20-ից մինչեւ 2022թ. հունվարի 31-ը ներառյալ»:

ՄԵԿՆԵԼ Է ՎՐԱՍՏԱՆ

Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այցով ժամանել է Վրաստան: Թբիլիսիի միջազգային օդանավակայանում վար-

չապետին դիմավորել է Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարար Իրակլի Կարշելաձեն:

ՀՀ կառավարությունից տեղեկացնում են, որ Նիկոլ Փաշինյանը մասնակցել է Թբիլիսիի «Մետաքսի ճանապարհ» միջազգային համաժողովին:

Այցի շրջանակում նախատեսված է նաեւ Չինաստանի եւ Վրաստանի վարչապետեր Նիկոլ Փաշինյանի եւ Իրակլի Դարիբաշվիլիի հանդիպումը:

ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԸ՝ ԱՐՑԱԽԱՐԱՅՈՒԹՅԱՆԸ

ՀՀ Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը ֆեյսբուքյան իր էջում տեղեկացրել է. «ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավորները ստացած պարգևավճարն ամբողջ ծավալով ուղղելու են բռնի տեղահանված մեր հայրենակիցների սոցիալական խնդիրների լուծման համար»:

ՄԱՆՐԱՄԱՆԵՐ

ԳՆՈՒՆԵՑԻ ՎԱՐԱԶԻԿԻ ՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԸ

Մեղադրյալի աթոռին է հայցմվել Հակոբ Ծառուկյանը, որին մեղադրանք է առաջադրվել, որ նա, ապօրինի կերպով ձեռք բերած եւ իր մոտ պահվող ասրճանակով զինված, 2023թ. հունիսի 6-ին ժամը 20:00-ի սահմաններում, Գեղամ Միրեկանյանի վարած «Օդել Ասրա» մակնիշի, 35 SD 097 համարանիշի սափսի ավտոմեքենայով Երևան քաղաքի Մայրա-Նովա եւ Ալեք Մանուկյան փողոցների խաչմերուկի հասվածից ուղեւորվել է դեղի Վարգապաս Գասպարյանի գտնվելու վայր՝ Երևան քաղաքի Ջեյմ Բրայսի 13/4 հասցեում սեղակայված «Լեդի Մերի Բյուրի լաունջ եւ սոլա» գեղեցկության սրահի մոտակայք եւ սղասել Վարգապաս Գասպարյանի սղասությունն անվերջ իրականացնելու նպատակով որսնաճանաչելու համար:



Ժամը 22:00-ի սահմաններում, երբ Վարգապաս Գասպարյանը դուրս է եկել նշված գեղեցկության սրահից եւ գտնվել է դրա դիմաց, Հակոբ Ծառուկյանն անսպասելի մոտեցել է նրան եւ իր կրած՝ հրազեն հանդիսացող, 7,62մմ տրամաչափի ատրճանակից Վարգապաս Գասպարյանին դիտավորությամբ սպանելու նպատակով մոտ տարածությունից մեկ կրակոց է արձակել նրա դեմքին՝ պատճառելով ծախ ստորին կոպի միջային անկյան շրջանի եւ աջ ծոծրակային շրջանի միջանցիկ հրազենային վնասվածք:

Սպանությունն իրականացնելուց անմիջապես հետո Հակոբ Ծառուկյանը դեպքի վայրից վազքով դիմել է փախուստի, անցել Երևան քաղաքի Այգեձոր թաղամասով, Օրբելի եւ Բաղրամյան փողոցներով, հասել է Հրաչյա Քոչարի 2ա հասցեում գործող «Ծիրան» սուպերմարկետի ավտոկայանատեղի, որտեղից նստել է Գրիգոր Խոջայանի «Օպել Աստրա» մակնիշի, 37 CR 330 համարանիշի տաքսի ավտոմեքենան եւ ուղեւորվելով

Գասպարյանի, 29-ամյա Սարգիս Աբգարյանի եւ մյուս կողմի՝ Երեւանի բնակիչ, 35-ամյա Նարեկ Կարապետյանի եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի, 42-ամյա Հարութ Հաբաբյանի միջեւ: Ըստ ձեռք բերված տեղեկությունների՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, գործարար Խաչատուր Սուքիասյանի եղբայրը՝ Ռոբերտ Սուքիասյանը, իր մոտ եղած հրազենից կրակոցներ էր արձակել, ինչի հետեւանքով Հ. Հաբաբյանը ոտքի շրջանում ստացել է հրազենային վնասվածք: Այս գործով մեղադրյալի աթոռին էր հայտնվել Ռոբերտ Սուքիասյանը, ինչպես նաեւ Վարգապաս Գասպարյանը, որին սպանեցին, եւ սպանության գործը դատարանում է:

ՔՆՍՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՆՆՉԱԿԱՆ

ԿԱՇԱՌՔՆ ՈՒ ԲԱԺՆԻ ՊԵՏԸ



ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության կողմից իրականացված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ՀՀ պաշտպանության նախարարության Մարտունու ռազմական ոստիկանության տարածքային բաժանմունքի պետ է. Ա.-ն կաշառք տվողի մատնանշած անձի օգտին ապօրինի գործողություն կատարելու համար ստացել է խոշոր չափերով՝ 570.000 ՀՀ դրամ կաշառք: Մասնավորապես՝ պարզվել է, որ ՀՀ ՊՆ N զորամասի ժամկետային զինծառայողի մոտ արգելված իր հայտնաբերելու դեպքը չարձանագրելու եւ ընթացք չստալու հարցում պաշտոնատար անձին կաշառք տալու միջոցով օգնելու համար վերջինիս հայրը՝ Ս. Հ.-ն, դիմել է «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի պահեստապետ Գ. Գ.-ին: Վերջինս էլ կաշառք տալուն օժանդակելու դիտավորությամբ նշված հարցով դիմել է իր մոտերի, ՀՀ ՊՆ Մարտունու ռազմական ոստիկանության տարածքային բաժանմունքի պետ է. Ա.-ին, որն ընդունել է կաշառքի առաջարկը: Այնուհետեւ է. Ա.-ն, իր ծառայողական եւ իշխանական լիազորություններն ու դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, զինծառայողի օգտին ապօրինի անգործություն կատարելու՝ վերջինիս մոտ արգելված իր հայտնաբերելու դեպքը չարձանագրելու եւ ընթացք չստալու համար պահեստապետ Գ. Գ.-ի օժանդակությամբ զինծառայողի հորից 2023 թվականի սեպտեմբերի 12-ին բանկային փոխանցման եղանակով ստացել է խոշոր չափերի՝ 570.000 ՀՀ դրամ կաշառք:

Ի դեպ, նախաքննության ընթացքում իրականացված խուզարկության ժամանակ ՌՈՒ բաժանմունքի պաշտոնատար անձանց աշխատասեյակներում հայտնաբերվել է առանց օրինական հիմքերի պահվող զինամթերք: 26.10.2023 թ.-ին ՊՆ Մարտունու ռազմական ոստիկանության տարածքային բաժանմունքի պետ է. Ա.-ն, վերջինիս կաշառք տված Ս. Հ.-ն եւ նրան օժանդակած Գ. Գ.-ն ձերբակալվել են: Մարտունու ՌՈՒ տարածքային բաժանմունքի պետ է. Ա.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով, իսկ Գ. Գ.-ին՝ 46-436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով: Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի կողմից միջնորդություն է ներկայացվել դատարան՝ է. Ա.-ի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու համար, որը դատարանի կողմից բավարարվել է:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՒՄԱՓԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթը ժողովրդագրական, որ Էդգար Մրցակի Չափարյանին մեղադրանք է առաջադրվել: Մասնավորապես՝ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ Ջ եւ ՉՀՃ Մրաբաշի մարզի սարածափային ստորաբաժանման դահեսագործում հաշվառված զինադաս, ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի ռազմական դրություն եւ ընդհանուր զորահավաք հայտարարելու մասին թիվ 1586-Ն որոշման համաձայն՝ 2020 թվականի նոյեմբերի 4-ին օրենքով սահմանված դասժամ կարգով ծանուցվել է:



Շանուցագիրն անձամբ ստանալուց, ծանուցագրի ստացականում անձամբ ստորագրելուց ու իր անձնական տվյալները գրառելուց հետո, զորահավաքային միջոցառումներին մասնակցելու նպատակով պարտավոր լինելով ծանուցագրում նշված երկօրյա ժամկետում ներկայանալ հիշյալ տարածքային ստորաբաժանու, չի ներկայացել, այն է՝ ռազմական դրության ժամանակ դիտավորությամբ խուսափել է զորահավաքային զորակոչից՝ այդ ծառայությունից ազատվելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում: Իսկ Վահագն Գագիկի Ռուստամյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի

համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ Ջ եւ ՉՀՃ Արարատի մարզի տարածքային ստորաբաժանման պահեստագործում հաշվառված զինապարտ, ՀՀ կառավարության՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի ռազմական դրություն եւ ընդհանուր զորահավաք հայտարարելու մասին թիվ 1586-Ն որոշման համաձայն՝ 2020 թվականի նոյեմբերի 5-ին օրենքով սահմանված պատշաճ կարգով ծանուցվել է: Շանուցագիրն անձամբ ստանալուց, ծանուցագրի ստացականում անձամբ ստորագրելուց ու իր անձնական տվյալները գրառելուց հետո, զորահավաքային միջոցառումներին մասնակցելու նպատակով պարտավոր լինելով ծանուցագրում նշված երկօրյա ժամկետում ներկայանալ հիշյալ տարածքային ստորաբաժանում, չի ներկայացել, այն է՝ ռազմական դրության ժամանակ դիտավորությամբ խուսափել է զորահավաքային զորակոչից՝ այդ ծառայությունից ազատվելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ


● Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 25-ից 26-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 57 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:



Էջը՝ ՄԱՐԻԱՍ ՂԱԶՐԱՅԱՆԻ

ԳՆԱԾ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ է ԿԲ-ն նպատակադրում 12-ամսյա եւ ոչ թե միջին գնաճ:
Հակոբ Թովմասյան (49 տարեկան)




ՊԱՏԱՄԵՆ. Ենթադրենք՝ ԿԲ-ն նպատակադրում է միջին գնաճը, այսինքն՝ T+1 թվականի հունվար-դեկտեմբերը՝ նախորդ՝ T տարվա նույն ժամանակահատվածի միջին գների նկատմամբ: T-ն այստեղ ընթացիկ տարին է, (T+1)-ը՝ հաջորդ, (T-1)-ը՝ նախորդ: Միջին գնաճի հաշվարկման մեթոդաբանությունն այնպիսին է, որ եթե T թվականի հունվարին արձանագրված լինի որեէ գնային շուկա (օրինակ՝ հացահատիկի գների անսպասելի մեծ աճ միջազգային շուկայում) եւ, հետեւաբար, բարձր գնաճ, ապա այն 2 տարի՝ T թվականի հունվարից մինչեւ T+1 թվականի դեկտեմբեր ամիսը, արտացոլվելու է միջին գնաճի ցուցանիշում: Շուկայի ազդեցության աստիճանաբար մարումից հետո գնաճը կայունանում է, սակայն միջին գնաճի ցուցանիշը բարձր է մնում: ԿԲ-ն կանխատեսում է բարձր միջին գնաճ եւ բարձրացում տոկոսադրույքները: Այս պարագայում, անցյալի ինտերգրացիոն ելքերով, գների սպասվելիք մակարդակն ավելի բարձր կլինի, թեւ գների սպասվելիք մակարդակն արդեն կարգավորված է: ԿԲ արձագանքն այդ պարագայում ոչ համարժեք է, ընկալելի չէ եւ կարող է գնաճային սպասումների ոչ ճիշտ ազդակներ ձեւավորել: Կստացվի, որ ԿԲ-ն, ապագայի գնաճային միջավայրին արձագանքելու փոխարեն, արձագանքում է նախկինում գրանցված գնաճին:

ՀՀ ԿԲ

«ԺՈՂՎՈՒՐԳ». 12-ամսյա գնաճի պարագայում այդ շուկայի գնաճի ցուցանիշում արտացոլվում է միայն 12 -ամիս՝ T+1 թվականի հունվարը, գնաճի 12-ամսյա կանխատեսումներն ավելի ճիշտ են արտացոլում գնաճային միջավայրը, հետեւաբար ԿԲ արձագանքը համարժեք է իրավիճակին՝ թե՛ տոկոսադրույքների ուղղորդման, թե՛ սպասումների ձեւավորման տեսակետից:

ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՐՑ. Ավագանին կարո՞ղ է բողոքարկել համայնքի ղեկավարի որոշումները, եւ ո՞ր դեպքում:
Նոնա Ալոյան (36 տարեկան)



ՊԱՏԱՄԵՆ. Համայնքի ավագանու անդամը համայնքի ղեկավարի որոշումները ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող է նախաձեռնել ավագանու արտահերթ նիստ, եթե համայնքի ղեկավարի որոշումը, իր կարծիքով, հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին: Այս դեպքում ավագանու նիստ պետք է իրավիճակի այդ մասին պահանջը համայնքի ղեկավարին ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Եթե համայնքի ավագանին գտնի, որ համայնքի ղեկավարի որոշումը հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին, ապա նա պարտավոր է համայնքի ղեկավարին ներկայացնել գրավոր բողոք՝ համապատասխան հիմնավորումներով՝ առաջարկելով համայնքի ղեկավարին փոփոխելու իր որոշումը:

Եթե համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում համայնքի ավագանու որոշման վերաբերյալ որեւէ որոշում չի կայացնում, ապա համայնքի ղեկավարի որոշումը համարվում է չընդունված:

ՀՀ ՏԿԵՆ

«ԺՈՂՎՈՒՐԳ». Համայնքի ղեկավարի որոշումները համայնքի ավագանին կարող է բողոքարկել դատական կարգով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում ընթացող ըմբշամարտի U23 տարեկանների աշխարհի առաջնությունում Հայաստանի ներկայացուցիչ, 57 կգ քաշային Մանվել Խնձրցյանն արծաթե մեդալ է նվաճել՝ եզրափակչում զիջելով Նաչին Մոնգոլիան (UWW):

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
 Բաժանորդագրվելու
 համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
 հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
 հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
 հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անսպասելի կանդորադառնա՞նք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ

հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
 Ազգանուն՝ _____
 Առաքման հասցե՝ _____
 Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+ 4 + 8 +11 + 16	Արարատ	+ 9 + 12 +22 + 24
Կոտայքի լեռներ	+ 4 + 8 +10 + 14	Արմավիր	+ 8 + 10 +21 + 23
Կոտայքի նախալեռներ	+ 9 + 11 +17 + 20	Վայոց ձորի լեռներ	+ 4 + 6 +12 + 15
Գեղարքունիք	+ 3 + 7 + 8 + 13	Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 11 +21 + 23
Լոռի	+ 8 + 13 +18 + 23	Սյունիքի հովիտներ	+14 + 18 +21 + 25
Տավուշ	+10 + 15 +20 + 25	Սյունիքի նախալեռներ	+ 7 + 12 +17 + 21
Արագածոտնի լեռներ	+ 3 + 6 + 9 + 13	ԼՂՀ	+13 + 17 +21 + 25
Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 10 +18 + 21	Երեւան	+11 + 13 +20 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
 Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22^ա/3, հեռ.՝ 010 54-64-23
 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03U089086
 տրված է 24.11.2010
 Ստորագրված է տպագրության 26.10.2023

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում՝ համագործակցությամբ հանձնված նյութերը չեն գրայնագրվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: